


23946

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

ՀԿ(Բ)Կ ՅԵՐԿՈՄԻ ԿՈՒԼՏՈՐՈՂ ԲԱԺԻՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ
ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԵՐԻ և ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ՆՎԵՐ
ՅԵՐԵՎԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԼԱԿԱԳՈՒՅՆ
ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻՑ)



ՊԵՏՀՐԱՑ

15 JAN 2010

551.8
6-68

ար

Պրոլետարիատ Բուլղար Յերկրների, ՄիԱՅԻ-Ք.

ՀԿ(Բ)Կ ՅԵՐԿՈՄԻ ԿՈՒԼՏՈՐՈԴ ԲԱԺԻՆ

18.1.54
Տ. Շ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՑԱԿԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՎԱԾԱՑԻՆ
ԿՈԼՏՆԵՍԱԿԱՆՆԵՐԻ և ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՀԱՐՎԱԾԱՑԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ՆՎԵՐ
ՅԵՐԵԿԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԼԱԿԱԳՈՒՅՆ
ՀԱՐՎԱԾԱՑԻՆՆԵՐԻՑ)



ԹԵՍԼՐԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ





9795-56

Պատ. խմբագիր — Սիրառ, Ա. Արազյան
Տել. խմբագիր — Գ. Զենյան

Սըբագըրեց — Անթիկ Գառարջյան

Հրատարակչ. № 2615

Գլաֆիլտ № 8186 (բ)

Պատվեր № 1443

Հանձնված և արտադրության 11 հունիսի

Ստորագրված և տպագրության 13 հունիսի

Գեղարված պատճեն — Յերևան՝

Տրամադ 700

23970

ԿԱՏԱՐԵՆՔ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՑՈՒՑՄՈՒԽՆՔՆԵՐԸ

ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԱՆՇԼԻԺՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

«Ի՞նչ ձեռք բերեց կուսակցությունը, իրազորձելով
հնդամյակը չորս տարում գյուղատնտեսության բնագա-
վառում։ Իրազորձեց արդյոք նա այդ հնդամյակը, թե՞
ձախողման յենթարկեց։

Կուսակցությունը կարողացավ մի ինչ-վոր յերեք
տարվա ընթացքում կազմակերպել ավելի քան 200 հա-
զար կոլեկտիվ տնտեսություններ և մոտ 5.000 Հացահա-
տիկային և անասնապահական խորհտնաեսություններ,
միաժամանակ չորս տարվա ընթացքում 21 միլիոն հեկ-
տարով ընդարձակել ցանքերի տարածությունները։

Կուսակցությունը հասավ այն բանին, վոր կոլտըն-
տեսությունները ներկայումս միացնում են գյուղացիա-
կան անտեսությունների 60 տոկոսից ավելին, ընդգրկե-
լով բոյոր գյուղացիների ցանքի 70 տոկոսից ավելին,
վորը նշանակում է հնդամյակի գերակատարումը յերեք
տեսքամ» (Ստալին)։

«Ասում են, վոր կոլտնտեսությունների ուղին ձիշտ
ուղի յե, բայց նա դժվարին ե։ Դա մասամբ միայն ձիշտ
ե։ Իհարկե, այդ ճանապարհին դժվարություններ կան։
Լավ կյանքը ձրի չի տրվում։ Բայց բանն այն ե, վոր գըլ-
խավոր դժվարություններն արդեն անցել են, իսկ այն
դժվարությունների մասին, վորոնք կանդնած են ձեր

առաջ, չարժե նույնիսկ լուրջ խոսել: Համենայն դեպս՝
համեմատած այն գժվարությունների հետ, վոր ապրե-
ցին բանվորները 10—15 տարի առաջ, ներկայիս ձեր
գժվարությունները, ընկեր կոլտնտեսականներ, յերե-
խայի խաղաղիք են թվում: Այստեղ հանդես յեկան ձեր
ճառախոսները և գովեցին Լենինգրադի, Մոսկվայի,
Խարկովի, Դոնբասի բանվորներին: Նրանք ասացին, թե
նրանք՝ բանվորները նվաճնեմներ ունեն, իսկ դուք՝ կոլ-
տնտեսականներդ շատ ավելի քիչ նվաճումներ ունեք:
Յես կարծում եմ, վոր ձեր հուետորների ճառերում
նկատվում եր նույնիսկ ընկերական վորոշ նախանձ, թե՝
վորքան լավ կլիներ, յեթե մենք՝ կոլտնտեսական գյու-
ղացիներս ել ունենայինք նույնպիսի նվաճումներ, ինչ-
պիսիք ունեք դուք՝ Լենինգրադի, Մոսկվայի, Դոնբա-
սի, Խարկովի բանվորներդ... Այդ բոլորը լավ ե: Բայց
դուք գիտեք, թե ի՞նչ են նստել այդ նվաճումները Լե-
նինգրադի, Մոսկվայի բանվորներին, ինչպիսի զրկանք-
ներ են կրել նրանք, վորպեսզի ձեռք բերեն վերջապես
այդ նվաճումները: Յես կարող եյի պատմել ձեղ մի քա-
նի փաստեր բանվորների 1918 թվականի կյանքից, յերբ
ամբողջ շարաթներով վոչ մի պատաս հաց չեյին տալիս
ընալիքներին, ել չեմ խոսում մսի և այլ սննդամթերքնե-
րի մասին: Այդ շրջանում լավագույն ժամանակներն ե-
յին համարվում այն որերը, յերբ հաջողվում եր Լենին-
գրադի ու Մոսկվայի բանվորներին տալ մի ութերորդ
ֆունտ սե հաց, այն ել կիսով չափ քուսպ խառնած: Յեկ
այդ տևեց վոչ թե մի ամիս, վոչ թե կես տարի, այլ ամ-
բողջ յերկու տարի: Սակայն բանվորները համբերում ե-
յին, չեյին ընկճպում, վորով չետե գիտեյին, վոր կգան
ավելի լավ ժամանակներ և նրանք վճռական հաջողու-
թյուններ ձեռք կրերեն: Յեկ ինչ՝ դուք տեսնում եք,
վոր բանվորները չխալվեցին: Դե համեմատեցեք ձեր
գժվարություններն ու զրկանքները բանվորների ապ-
րած գժվարությունների ու զրկանքների հետ և դուք
կտեսնեք, վոր դրանց մասին չարժե նույնիսկ լրջորեն
խոսել» (Ստալին):

«Մենք ձեռք բերինք այն, վոր ողնեցինք չքավորնե-
քի միլիոնավոր մասսաներին՝ մտնելու կոլտնտեսու-
թյունները: Մենք ձեռք բերինք այն, վոր մտնելով կոլ-
տնտեսությունները և ոգտվելով այնտեղ լավագույն հո-
ղից, արտադրության լավագույն դործիքներից, չքա-
վորների միլիոնավոր մասսաները բարձրացան միջակ-
ների մակարդակը: Մենք ձեռք բերինք այն, վոր չքա-
վորների միլիոնավոր մասսաները, վորոնք առաջ կիսա-
քաղց կյանք եյին վարում, այժմ կոլտնտեսություննե-
րում դարձել են միջակներ, դարձել են ապահոված
մարդիկ: Մենք ձեռք բերինք այն, վոր կասեցրինք գյու-
ղացիների շերտավորումը չքավորների ու կոլտակների,
ջախջախեցինք կոլտակներին, ողնեցինք չքավորներին՝
դառնալու իրենց աշխատանքի տերը կոլտնտեսություն-
ների մեջ, միջակներ դառնալու»:

«Սակայն դա մեր առաջին քայլն ե միայն, մեր ա-
ռաջին նվաճումը կոլտնտեսական շինարարության ճա-
նապարհին:

Սիալ կլիներ, յեթե կարծեյինք, վոր մենք պետք ե
կանդ առնենք այդ առաջին քայլի վրա, այդ առաջին նր-
վաճման վրա: Վո՞չ, ընկերնե՛ր, մենք չենք կարող կանդ
առնել այդ նվաճման վրա: Վորպեսզի առաջ շարժվենք
և վերջնականապես ամրացնենք կոլտնտեսությունները,
մենք պետք ե անենք յերկրորդ քայլը, մենք պետք ե
ձեռք բերենք նոր նվաճում: Վո՞րն ե այդ քայլը: այդ
քայլն ե՝ բարձրացնել կոլտնտեսականներին, այդ նախ-
կին չքավորներին, նախկին միջակներին ավելի բարձր
աստիճանի: Այդ քայլն ե՝ ունենոր դարձել բոլոր կոլ-
տնտեսականներին: Այո՛, ընկերնե՛ր, ունենոր դարձնել»:

«Մենք ձեռք բերինք այն, վոր կոլտնտեսություննե-
քի չնորհիվ բարձրացրինք չքավորներին միջակների մա-
կարդակը: Այդ շատ լավ ե: Բայց այդ քիչ ե: Այժմ մենք
պետք ե ձգտենք անելու մի քայլ ևս զեպի առաջ՝ ողնե-

լու բոլոր կոլտնտեսականներին, նախկին չքավորներին, նախկին միջակներին՝ բարձրանալու ունեորների մակարդակը։ Դրան կարելի յէ հասնել, և մենք պետք են հասնենք ինչ զնով ուզում ելինի (յերկարաւուն ծափեր)։ Այժմ մենք ունենք այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ են մեր այդ նպատակին հասնելու համար։ Այժմ վատ են ոպատճործվում մեր մեքենաներն ու տրակտորները։ Մեր հողը լավ չի մշակվում։ Բավական են միայն բարելավել մեքենաների ու տրակտորների ոպատճործումը, բավական են միայն բարելավել հողի մշակումը, և մենք կհասնենք այն բանին, վոր յերկու անգամ, յերեք անգամ կավելացնենք մեր մթերքների քանակը։ Իսկ այդ միանդամայն բավական են մեր բոլոր կոլտնտեսականներին կոլտնտեսական դաշտերի ունեոր աշխատավորներ դարձնելու համար» (Ստալին)։

«Ի՞նչ դրություն գոյություն ուներ, նախքան կոլտնտեսական շինարարության ծավալումը՝ 4 տարի առաջ։ Հարստանում, վեր ելին բարձրանում կուլակները։ Աղքատանում, քայլքայվում ելին չքավորները, ստրուկ գառնալով կուլակներին։ Դեպի վեր, դեպի կուլակներն ելին մագլցում միջակները և ամեն անգամ վայր ելին գլորվում, լրացնելով չքավորների շարքերը, ուրախացնելով կուլակներին։ Դժվար չեն հասկանալ, վոր այդ ամբողջ իրարանցումից շահում ելին միմիայն կուլակները և թերես ունեորներից վօմանք։ Գյուղի յուրաքանչյուր 100 տնտեսությունից կարելի յեր գտնել 4—5 կուլակային տնտեսություն, 8 կամ 10 ունեոր տնտեսություն, 45—50 միջակ և մոտ 35 չքավոր տնտեսություն։ Հետևաբար, գյուղացիական բոլոր տնտեսությունների առնվազն 35 տոկոսը կազմում ելին չքավորները, վորոնք հարկադրված ելին կրել կուլակային ստրկության լուծը» (Ստալին)։

«Մեր մեծ ուսուցիչ լենինն ասել ե. «Ով չի աշխա-

տում, նա չի ուտի»։ Ի՞նչ են նշանակում այդ, ո՞ւմ դեմ են ուղղված լենինի այդ խոսքերը։ Շահագործողների դեմ, նրանց դեմ, ովքեր իրենք չեն աշխատում, այլ հարկադրում են աշխատել ուրիշներին և հարստանում են ուրիշների հաշվին։ Ե՞լ ում դեմ։ Նրանց դեմ, ովքեր իրենք ծուլություն են անում և ուզում են շահվել ուրիշների հաշվին։ Սոցիալիզմը պահանջում են վոչ թե ծուլություն անել, այլ պահանջում են, վոր բոլոր մարդիկ աշխատեն ազնվորեն, աշխատեն վոչ թե ուրիշների համար, վոչ թե հարուստների ու շահագործողների համար, այլ իրենց համար, հասարակության համար։ Յեթե մենք աշխատենք աղնվորեն, աշխատենք մեզ համար, մեր կոլտնտեսությունների համար, ապա կհասնենք այն բանին, վոր 2—3 տարուց բոլոր կոլտնտեսականներին, թե՛ նախկին չքավորներին և թե՛ նախկին միջակներին կհասցնենք ունեորի մակարդակին, այնպիսի մարդկանց մակարդակին, վորոնք ոգտվում են լիառատ մթերքներից և կատարելապես կուլտուրական կյանք են վարում։ Այդ ե այժմ մեր մոտակա խնդիրը։ Դրան կարող ենք հասնել մենք, դրան պետք են հասնենք ինչ զնով ել լինի (ՍՏԱԼԻՆ)։

«Մենք, բայց կիկներս, չելինք ունենա այն հաջողությունները, վոր ունենք այժմ, յեթե չկարողանայինք կուսակցության կողմը նվաճել միլիոնավոր անկուսակցական բանվորների ու գյուղացիների վստահությունը։ Իսկ ի՞նչ ե պահանջվում դրա համար։ Դրա համար պահանջվում ե, վոր կուսակցականները չմեկուսան անկուսակցականներից, վոր կուսակցականները չամփոփվեն իրենց կուսակցական պատյանում, վոր նրանք չպարծենան իրենց կուսակցականնությամբ, այլ լսեն անկուսակցականների ձայնը, վոր նրանք վոչ միայն սովորեցնեն անկուսակցականներին, այլև սովորեն նըրանցից։»

«Յես դեմ չեմ, վոր կոլտնտեսություն ընդունեն ընտրությամբ: Բայց յես դեմ եմ, վոր անխտիր բոլոր մենատնտեսների առաջ փակեն կոլտնտեսությունների ճանապարհը: Դա մեր, բայլշեիկյան քաղաքականությունը չե: Կոլտնտեսականները չպետք ե մոռանան, վոր վոչ շատ ժամանակ առաջ ինքները մենատնտեսներ են յեղել» (Ստալին):

«Բեղենչուկի ընկերները կոլտնտեսության մեջ կատարած իրենց աշխատանքը համարում են համեստ և համարյա աննշան աշխատանք, իսկ հռետորների ու առաջնորդների աշխատանքը, վորոնք յերեմն յերեք արշինանոց ճառեր են ասում՝ մեծ, ստեղծագործ աշխատանք:

«Անցել են այն ժամանակները, յերբ առաջնորդները համարվում եյին պատմության միակ ստեղծողները, իսկ բանվորներն ու գյուղացիները հաշվի չեյին առնըվում: Ժողովուրդների և պետությունների բախտը հիմա վճռում են վոչ միայն առաջնորդները, այլ նախե առաջ և գլխավորապես աշխատավորների միլիոնավոր մասսաները: Բանվորները և գյուղացիները, վորոնք առանց ազմուկի և աղաղակի կառուցում են գործարաններ, հանքահորեր, յերկաթուղիներ, կոլտնտեսություններ, խորհանտեսություններ, ստեղծում են կյանքի բոլոր բարիքները, կերակրում ու հագնում են ամրող աշխարհին, —ահա թե ովքեր են նոր կյանքի իսկական հերոսները և ստեղծողները»:

«Այս մասին, ինչպես յերեսում ե, մոռացել են Բեղենչուկի մեր ընկերները: Լավ չե, յերբ մարդիկ դերագնահատում են իրենց ուժերը, սկսում են պարծենալ իրենց ծառայություններով: Այդ տանում ե դեպի պարծենելություն, իսկ պարծենկոտությունը լավ բան չե: Բայց ավելի վատ ե, յերբ մարդիկ սկսում են թերապնահատել իրենց ուժերը, չեն տեսնում, վոր իրենց «համեստ», «աննկատելի» աշխատանքն իրոք հանդիսանում ե մեծ, ստեղծագործ աշխատանք, վորը վճռում ե պատմության բախտը»: (ՍՏԱԼԻՆ)

ՄԵՐ ՆՎԱԶՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

«Վորոնք են չորս տարրում կատարած հնդամյակի արդյունքներն արդյունաբերության ասպարիզում:

Հաղթանակ ձեռք բերի՞նք արդյոք մենք այդ ասպարիզում: Այսոք բերինք: Յեզ վոչ միայն ձեռք բերինք, այլև կատարեցինք ավելի շատ, քան կարող եյին սպասել մեր կուսակցության ամենակրակոտ անդամները: Այժմ այդ չեն ժխտում նույնիսկ թշնամիները:

Մենք մետաղաձուլում՝ յերկրի ինդուստրացման այդ հիմքը չունեյինք: Այժմ նա կա մեզ մոտ:

Մեզ մոտ տրակտորային արդյունաբերություն չկար: Այժմ նա կա մեզ մոտ:

Մեզ մոտ ավտոմոբիլային արդյունաբերություն չկար: Այժմ նա կա մեզ մոտ:

Մեզ մոտ դազգյահաշինություն չկար: Այժմ նա կա մեզ մոտ:

Մեզ մոտ լուրջ, ժամանակակից քիմիական արդյունաբերություն չկար: Այժմ նա կա մեզ մոտ:

Մեզ մոտ ժամանակակից գյուղատնտեսական մեքենաների իրական և լուրջ արդյունաբերություն չկար: Այժմ նա կա մեզ մոտ:

Մեզ մոտ ավիացիոն արդյունաբերություն չկար: Այժմ նա կա մեզ մոտ:

Ելեկտրական եներգիա արտադրելու կողմից մենք կանգնած եյինք ամենավերջին տեղում: Այժմ մենք առաջ անցանք առաջին տեղերից մեկը:

Նավթամթերքի ու ածխի արտադրության կողմից մենք կանգնած եյինք վերջին տեղում: Այժմ մենք առաջ անցանք առաջին տեղերից մեկը:

Մենք ունեյինք միայն մեկ ածխամետաղաձուլական բազա Ռւկրայինայում, մի բազա, վորը գծվարությամբ եյինք յոլա տանում: Մենք կարողացանք վոչ միայն բարձրացնել այդ բազան, այլև ստեղծեցինք մի նոր

ածխամետաղաձուլական բազա Արևելքում, վորը կազմում է մեր յերկրի հպարտությունը:

Մենք ունեյինք տեքստիլ արդյունաբերության միայն մեկ բազա մեր յերկրի հյուսիսում: Մենք հասանք այն բանին, վոր ամենամոտ ժամանակում կունենանք տեքստիլ արդյունաբերության յերկու նոր բազա՝ Միջին Ասիայում և Արևելյան Սիբիրում:

Յեկ վոչ միայն ստեղծեցինք արդյունաբերության այդ նոր, հսկայական ճյուղերը, այլև ստեղծեցինք այնպիսի մասշտաբով և այնպիսի ծավալով, վորի առաջ նսեմանում են յեվրոպական ինդուստրիայի մասշտաբն ու ծավալը:

Իսկ այդ բոլորի հետևանքը յեղավ այն, վոր կապիտալիստական տարրերը վերջնականապես ու անվերագարձորեն դուրս են մղվել արդյունաբերությունից, իսկ սոցիալիստական արդյունաբերությունը դարձել է ինդուստրիայի միակ ձևը ԽՍՀՄ-ում» (Ստալին):

«Առաջին հնգամյակի շրջանում մենք կարողացանք կազմակերպել խանդավառությունը և վճռական հաջողություններ ձեռք բերինք: Այդ շատ լավ է, սակայն այժմ այդ քիչ է: Այժմ այդ գործը մենք պետք է լրացնենք նոր գործարանների և նոր տեխնիկայի յուրացման խանդավառությամբ ու պաֆոսով, լրջորեն բարձրացնելով աշխատանքի արտադրականությունը, լրջորեն կրճատելով ինքնարժեքը: Այդ է այժմ զլխավորը, վորով-հետեւ միմիայն այդ բացայի վրա կարող ենք մենք յերկրորդ հնգամյակի, ասենք՝ յերկրորդ կիսում հզոր վազք կատարել թե՛ շինարարության ասպարիզում և թե՛ արդյունաբերական արտադրանքի աճման ասպարիզում» (Ստալին):

ԽՍՀ-ՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԵ ԴԱՐՁԵԼ Ե
ՓԱՌՔԻ ԳՈՐԾ, ՊԱՏՎԻ ԳՈՐԾ, ՀԵՐՈ-
ՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾ

ՍՏԱԼԻՆ

ՉԻՐՎԱԿԱՑՄԴԵ

“ԱՐԱՐԱՏ” ԳՈՐԾԱՐԱՆ

Աւրախալի պատեհություն ունեցա առաջին անգամ այցելել այդ հոչակավոր գործարանը և մի քանի ժամ գիտել նրա բանվորների յեռանդուն աշխատանքը և խանդավառությունը:

Հետաքրքրությանս գոհացում տալու համար գործարանի այժմյան դիրեկտոր ընկ. Պատվական Ղազարյանը բարի յեղավ ինձ տալու մի շարք թվական տեղեկություններ, վորոնք ավելի պերճախոս են, քան ամեն մի բանաստեղծություն:

Առաջին հնգամյակի կատարման մեջ «Արարատ» գործարանը բռնել է ամենապատվավոր տեղերից մեկը: Այսպես որինակ, ամբողջ հնգամյակը նա ավարտել է 3 տարի և 8 ամիս ժամանակամիջոցում: Մինչ մյուս գործարաններն իրենց հնգամյակը ավարտում եյին 4 տարում, «Արարատն» արդեն իր պլանը լրացրել է 124,4 տոկոսով, այսինքն նախադրված 24,922·000 ռուբլու (1926-27 թվի գներով) փոխարեն մեզ տվել է 30·291·000 ռուբլու արտադրանք:

11

Յերկրորդ հնդամյակի տուաջին ամիսներում նույնպես «Արարատ»-ը ընթանում է տուաջին շարքերում։ Հունվարից մինչև մայիսի վերջը, այսինքն 5 ամսվա մեջ, պլանով նախատեսված 2,015.000 ռուբլի (26-27 թվի գներով) փոխարեն նա տվել է 2,283.700 ռուբլու արտադրանք, այս եւ 113 տոկոս։



Բանվորների 100 տոկոսն ընդգրկված է սոցմրցության և հարվածայնության մեջ։

«Արարատ» գործարանը՝ մեր արտաքին տուերի ծավալման տեսակետից ունի մեծ նշանակություն։ Խորհրդային Միությունից Յեվրոպա արտահանվող գինու ասսարիզում նա տուաջին տեղն է գրավում։ Գործարանը, բացի գինուց, արտադրում է կոնյակ, դոչար, վակում-դոչար, խաղողի նյութ, զոված սպիրտ և այլն։

Յարիզմի, նաև դաշնակցական կառավարության ժամանակ գործարանը սպասարկում էր պետական չինովնիկների և գանձակցական «մինիստրների», խմբապետների, ինչպես նաև Հայաստանը «փրկելու համար»

Յեվրոպայից յեկած գեներալների և գնդապետների անձնական հաճույքներին, թեև այդ ժամանակ (Դաշնակցության որերին) գործարանի արտադրողականությունը չափազանց ընկած էր։ Ներկայումս «Արարատ»-ը հանդիսանում է սոցիալիզմի կառուցման գործի կարևոր ազդակներից մեկը։

Սորու բերված թվերը ցույց են տալիս, թե ինչպես գնալով բարձրանում է գործարանի արտադրությունը, վաղուց մոռացության տալով նախապատրազմյան (Շուստովյան) մակարդակը, մանավանդ գաշնակցականների թվաբանությունը։

Գործարանը տվել է.

1913 թվին	689.000 ռ. արտադրանք, 100 տոկ.
1914 »	374.000 ռ. » 55 »
1920 »	5.000 ռ. » 0,73 »
1921 »	64.000 ռ. » 9 »
1925 »	982.000 ռ. » 137 »
1928—29 թվին	1.000.000 ռ. » 146 »
1929—30 »	1.600.000 ռ. » 178 »
1930—31 »	1.380.000 ռ. » 168 »

Այս մեծ հաջողությունները ձեռք են բերված հարվածայնության և բանվոր դասի մեծ խանդավառության պայմաններում։

Ահա նրանք, լավագույն հարվածայինները։ Միջաշասակ, համակրելի, ժպտուն դեմքով մի համակրելի յերիտասարդ—ծիգրան Խաչիկյան անունով։ Գինութաժնի առաջավոր հարվածայինը, բրիգադիր և ցեխականի նախագահ։ Մայիս ամսվա պլանը նրա ցեխը կատարել է 140 տոկոսով։ Մի ուրիշը՝ Կին ե, Արեգնազ Ավետիսյան անունով, շենող ցեխում, վոր իր պլանը կատարել է 114 տոկոսով։ Հունիսին նոր գրոհի յերուսակել, գերակատարման տոկոսը հատկապես շառւրմային ամսին ավելի բարձրացնելու համար։

Անցնում են մեր առջևով յերեք հաղթանգամ տույլ տղամարդիկ։ Տակառի ցեխի լավագույն հար-

վածայիններն են—Վահան Ավագյան, Հմայակ Սաբագրոյան և Մանուկ Պետրոսյան։ Պլանով նախատեսված 96 տակառի փոխարեն յուրաքանչյուրը նրանցից մայիս ամսին արտադրել է 116 տակառ (127 տոկոս)։

Ահա կոնյակի ցեխի ենտուզիաստը—Վահան Ներսեսյանը, դեմքով առույգ, բարձրահասակ 43 տարեկան մի տղամարդ, վոր առաջին իսկ հայացքով համակրանք ե ներշնչում դիտողին։ Նա մայիս ամսվա իր պլանը կատարել է 122 տոկոսով։

Բոլոր ցեխերում, բոլոր բրիգադներում, առաջավոր հարվածայիններն են։ Նրանք մեր յերկրի բոլոր անկյուններումն են, գործարաններում և հանքերում, կոլխոզներում և սովխոզներում։ Նրանք պայքարում են հանուն սոցիալիզմի, հանուն ստեղծագործության և յերկրի անընդհատ վերաշինության։ Նրանք են, վոր կերտում են նոր կյանքը, նոր աշխարհը, սոցիալիստական աշխարհը։

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆԻ ԿԱՅԱՐԱՆԻ ՀԱՐՎԱԺԱՅԻՆՆԵՐԸ

Յերկաթուղին բանում ե՝ կնշանակի յերկրի զարդերակը խփում ե։

Բայց ի՞նչպես ե խփում զարկերակը։ Դանդաղ, աղադ, ընդմիջումներով, լի ու լի, անխափան—ահա գըլխավոր հարցը։ Յերկաթուղին իր գնացքներով տանումբերում և մարդկանց և յերկրի արտադրությունը։ Վորքա՞ն ե տանում-բերում։ Գնացքները, յերկաթզծի պահեստները—յերկրի արյունատար անոթներն են, իսկ արյունը յերկրի գործարանային և գյուղատնտեսական արդյունաբերությունն ե։ Բանը միայն արդյունաբերություն ունենալը չե, այլ այն, թե ինչպիսի յերակներ ունի յերկիրը։

Վարպետ Գալուստը, դեպոյի փականագործ, 29 թը-վից հարվածային, միանգամայն գիտակցում ե յերկաթուղու մեծ նշանակությունը։ «Պետք ե նվիրվենք հիմնարկության, ուրիշ ճանապարհ չկա»—ասում ենա։

Յեվ ինքը «նվիրվել ե հիմնարկությանը», ինչպես ինքն ե ձևակերպում։ Հանգստի որ չի հարցնում, վոր պետք յեղավ, կգա՞ կաշխատի։

— Դժվար ե, ընկեր Գալուստ, կհոգնես։

— Դժվարը չաշխատելն ե։

— Միթե՞։

— Յես եղաւ եմ տեսնում,—և փականագործը բացատրում ե, —յես նկատում եմ, վոր հարվածային

լինելը ավելի հետ ե, քան չլինելը: Հարվածայինը ի-
րեն դնում ե գիշիպիլինայի տակ, և դա գործը հեշ-
տացնում ե: Անկարդ աշխատանքը հետ ե գցում գործը,
դժվարացնում ե: Իսկ գործն ել մեր գործն ե, չե՞:

— Կարծում եմ...

— Բոլորին կղարձնենք հարվածային,— ծիծա-
ղում ե Գալուստը, — մեզ կտեսնեն՝ իրենք ել առաջ
կընկնեն:

— Որինակներ կա՞ն:

— Վոնց չե: Կային աշխատանքից հետ մնացողներ՝
Յերվանդ Հովհաննիսյան, Արփիկ Յեղիկյան, Արամ
Գրիգորյան: Անունն եր աշխատանք, այնպես ուղղե-
ցինք, վոր... Հիմա աշխատում են: Առաջվա 2 ժամվա-
գործը հիմա մի ժամում կտարում են:

Վերջն ել, ի միջի այլոց, աչքով ե անում և ավե-
լացնում ե.

— Սուտ հարվածայիններին ել զտեցինք...

Քառասուն յերեք տարեկան ե վարպետ Գալուստը,
աշխատանքի մեջ զլված, առույգ: Սուր ժպտով նայող
աչքերը կարծես ասում են. «Հը, ել ի՞նչ ինդիրներ կան
չվճռված, ասա՞ վճռենք»:

Բայց բոպեն թանգ ե, և վարպետ Գալուստը բարձ-
րանում ե շոգեմեքենայի վրա և սկսում զննել վար-
պետ Պողոսի հետ: Վարպետ են ասում սրանց բոլորին
դեպոյում: Յերկու յերիտասարդ խառնվում են գործին
և մատները քսելով ինչ վոր մի դետալի, ցույց են տալիս
դեֆեկտը: Ո՞վքեր են, ինչ զործ ունեն: Դուրս ե գալիս,
մեքենավարներն են նույն շոգեմեքենայի:

Գալիս ե յերիտասարդ մեքենավարներից մեկը՝
Գալուստ Նիկողոսյանը: Դարձյալ նույն չարաձճի ժողի-
տը: Ներվային ե քիչ, բայց առույգ և ուրախ: Այդպի-
սի տեսքը ձեռաց մատնում ե հարվածայիններին: Ախր
ինչ է հարվածայինը—դա նախ և առաջ իր գործով վո-
գեվորված բանվորն ե, աշխատավորը:

Աշխատանքը վոգեորիչ ուժ ունի, ուրախացնում ե:

Ով ուղում ե սոցիալիզմի մարդու բնույթն իմանալ,
թող ուսումնասիրի հարվածայինի տիպը:

— Ախր, ընկեր Նիկողոսյան, ձեր հարվածայինու-
թյամբ ինչ պիտի գուրս դա, — կատակում եմ յես:

— Դուրս գալը թողեք, հյա մի տեսեք ինչ ե դուրս
յեկել: Այ հենց գիմացի գաշտը նայեք: Քսան թվին յե-
զե՞լ եք Յերեան: Այդտեղ մարդ եյին սպանում կամ
պոռնկություն անում: Հիմա Մեխիսնիկական գործա-
րանն ե, Կարբիտը և մյուսները: Շինարարությունը
լցվել է չորս կողմը: Ահա թե ինչ ե անում հարվածայ-
նությունը:

Հետո մտքերի մեջ ե ընկնում:

— Հենց եդ գաշտում կորի ենք արել գաշնակների
դեմ: Վո՞նց չե: Նավողչիկ եյի:

— Իսկ պլանն ինչպես եք կատարում:

— Պլանը: Դեռ պլանը ուայոնը չի ուղարկել: Բայց
մենք դրան չենք նայում: Վերցնում ենք նախկին ամիս-
ների պլանը և աշխատում գերակատարել: Մեր դեպոն
հարվածայինն ե: Դեռ ուղում ենք գերհարվածային դառ-
նանք:

Գծի վրայով մի շոգեմեքենա յե անցնում: Հարվա-
ծայինը առանձին սիրով մտիկ տվեց, ինչպես կավայե-
րիստը իր ձիուն. — իմ շոգեմեքենան ե, ընկերս ե վա-
րում:

— Վո՞նց եք բրիգադներդ իրար հետ:

— Ոչ, շատ լավ: Ընկերս զնալու յեղալ՝ յես եմ
գնում ճամբու դնելու, յեկալ՝ հարցնում եմ՝ ինչպես
յեկար, պատահար հո չեղալ: Բոլորս այսպես ենք:

Խոսակցության միջամտում ե հին մեքենավար Մե-
լիքյան Արմենակը, Համամիութենական պարզեատրու-
թյան արժանացած հարվածայինն: Խոսակցությունը վե-
ճի յե փոխվում: Մելիքյանը պնդում ե, վոր յերբեմն
շոգեմեքենան չնորոգած ել կարելի յե ճամբար դնել:


— Շատ եք կանոնագրքի հետեւց ընկնում:

Նիկողոսյանը հանում ե կանոնագիրքը, վոր վճռա-
պես արգելում ե աննորոգ շոգեմեքենան ճամբար հանե-

լը: Նախատեսվում է պատիժ: Ըստ յերկույթին Մեծք-
յանը աչքի առաջ ունի թեթև, աննշան հիվանդություն-
ները: Բայց Նիկողոսյանը տաքանում է.

— Այս թեթև, աննշան վնասվածքով չոգեմեքե-
նան ո՞վ ե բերում գեպո: Շոգեմեքենան յեկավ գեպո՝
ամել ե կարեվոր վնասվածք ունի: Վոչ, ընկեր, պետք
է և կանոնագրքին հետեւ և չոգեմեքենային:

Նիկողոսյանը տեխնիկայի կատարելագործման գա-



Ընկ. Ոհաննիսյան Մուշեղ

սախոս ե: Վերապատրաստում ե ընկերներին:

Իմ ուշադրությունը հետզհետե գրավում ե մի շատ
կարեոր հանդամանք: Այսուեղ հարվածայինները աշ-
խատում են մի կողմից իրենց հետ տանել մյուս ընկեր-
ներին, և մյուս կողմից լայնացնել, մեծացնել դորձը:
Շենքը, տեղը նեղ ե գալիս նրանց: Ահա, նայեք, սա
ինչ գարբնոց ե, ցույց ե տալիս զեպոյի տեսուչը: Պայ-
քար ենք մզում այ են դիմացի շենքը գրավելու, տես-
նենք ինչ դուքս կգա:

Իսկ գծի վերանորոգման արտելապետ Ոհաննիսյան
Մուշեղը ուրիշ գանգատ ունի.—այսքան տարի գծի
վարպետ եմ, կարող ելի մեքենավար դառնալ: Մնացի
ու մնացի գծի վրա:—Բա վոնց ե լինելու ձեր բանը:

— Վոնց: Մենք ել զոռ ենք տալիս գիծը կատարե-
լագործել, վորքան հնար կա: Պահնով որական մի բան-
վորին 7 շպալ ե ընկնում, պայմանով վերցրել ենք 8,
իսկ փաստորեն տալիս ենք տասը: Մինչև 31 թիվը մի
շպալը 50 կոպեկ եր, 32-ին իջավ 32 կոպ., հիմա 27
կոպեկ ե:

Ուժեղ ու առողջ բանվոր ե հարվածային ընկ: Մու-
շեղը: Բայ չունի ասելու: Նրա մասին փսփսում ե ընկ:
Մտեփանյանը.—Մուշեղը միայն ցույց չի տալիս գոր-
ծը, ինքն ե անձամբ աշխատում, թե փաստով ցույց տա-
լիս, վոր 2 ժամի գործը կարելի յէ մի ժամում անել:
Յեվ սովորում են բանվորները:

Հարվածայնությունը դրել ե իր կնիքը կայարանի
աշխատանքների վրա: Նու պայշարում ե, ծավալում ե
աշխատանքի նորման, դիսցիլլինան կրթում ե, վարա-
կում հետամնացներին:

Հարվածայինները ներքեից բարձրացնում են կա-
յարանի գործը: Վերցրել են նախաձեռնությունը և իս-
կապես դառնում են կայարանի տերերը: Տեխնիկայի
կատարելագործման ժամերն արդեն մտել են աշխատան-
քի պարտականությունների ցուցակը—ամեն որ լավ
մեքենավարները, վոր անցել են Լենինականի, Թիֆլի-
սի կուրսերը՝ դասավանդում են: Ինչպես բացատրեց
ընկ: Մտեփանյանը, ամեն բռպե ուշացումը հաշվում ե
մեքենավարի վրա մինուս 5 րոպե, վորով նա իր ամսա-
կան ավանս ստացած 100 թվանշանը ծախսելով՝ հար-
վածայնությունից դուրս ե դալիս՝ այս բալային սիս-
տեմը մեծ նվաճումներ ե տալիս տեխնիկական նորմա-
վորման մեջ:

— Բնկերներ, ինչ ասենք, ձեր կողմից առաջիկա
համագումարում կոլտնտեսականներին:

— Ասեք, յեթե կոլտնտեսականներն ել հարվածա-
յին դառնան և աշխատեն այնպես, ինչպես բանվորնե-
րը, մենք բոլորս սոցիալիզմի արժանի կառուցողները
կլինենք:

Այսպես ասացին Յերեանի կայարանի հարվածա-
յինները:

նում ունենում է ելեվեջներ, այսինքն՝ յերբեմն բարձրանում ե, յերբեմն իջնում։ Ըստ Առանձին բանվորների՝ պլանների կատարումը, միջին թվով, կազմում է 115 տոկոս, իսկ գործարանինը, ամբողջությամբ վերց-

Ս. ԶՈՐՅԱՆ

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Մեխանիկական գործարանը մեր յերկրի այն կարևոր նվաճումներից մեկն է, վոր ձեռք ե բերել Խորհրդային իշխանությունը վերջին տարիների ընթացքում, Տեր-Ավետիքյանի հասարակ մեխանիկ, արհեստանոցը մեծացնելով ու գարձնելով ընդարձակ համամիութենական նշանակություն ունեցող մի գործարան։

Մի գործարան, վոր կատարում է վոչ միայն նորոգումներ, պատրաստում է վոչ միայն մեքենաների առանձին մասեր, այլև ամբողջական մեքենաներ—կոնսերվի մեքենաներ, գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ, ավտո-կլավիներ, մատուներ և այլն։

Մի գործարան, վոր տեղական պատվերներ կատարելուց բացի, կատարում է նաև Խորհրդային Միության տարբեր ծայրերից յեկող պատվերները։ Ավելին. այն խոչոր, հարյուր հազարների հասնող պատվերները, վոր Միութենական Սոյուզուիրան (Չուկ Միությունը) տալիս եր արտասահմանին, գլխավորապես Գերմանիային, այժմ կատարում է մեր Մեխանիկական գործարանը, ազատելով մեզ այդ խնդրում արտասահմանյան կախումից։

Այսքանն արդեն բավական ե ցույց տալու, թե ինչ հսկայական նշանակություն ունի Մեխանիկական գործարանը համար։

Պլանների կատարումը հունվարից Մեխանիկա-



րած մոտ 92 տոկոս։ Այս հանդամանքը բացատրվում է բանվորական ուժի պակասով։

Այժմ հունիսը հայտարարված է հարվածային ամիս, և կասկած չկա, որ գործարանը կծածկի իր այս ձեղքվածքը, քանի վոր բոլոր ցեխերում կատարվում է յեռանդուն սոցմքցում և առանձին բանվորներն առանձին ցեխերում հարվածայնության պայմանագրեր ունեն կնքած միմյանց հետ։

Հարվածայինների այդ թիվը հասնում է 157-ի։

Հիշենք գրանցից մի քանիսին։

1. Պավել Մկրտչյան, 40 տ., բնտանիքավոր բանվոր. գարբնոցի ցեխի վարպետ. պլանը կատարում է 165 տոկոսով։ Ամբողջովին տարված է իր գործով։ Մեծ

ցանկություններնի սովորելու և կատարելագործվելու։ Յեվ այդ առթիվ ասում են. «Յեթե զրագետ լինեմ՝ ավելի լավ կսովորեմ, վորովհետեւ դրաքը կկարդամ և կիմանամ տեխնիկայի գաղտնիքները, այսինքն՝ կտիրապետեմ տեխնիկային»։

2. Հովհաննես Սարդարյան. — Յերիտասարդ, հարվածային. աշխատում է խառատի ցեխում, ուր և բրի-



գաղիք ե. պլանը կատարում է 138 տոկոսով։ Բանֆակի առաջին կուրսի ուսանող ե, բայց այժմ թողել երանֆակը, վորպեսզի գործարանին—ընկերներին ոգնի՝ պատվերները ժամանակին հասցնելու։

3. Ալեքսան Պարսամյան և Աբրահամ Մնակյան. — Սրանք գործարանի յերկվորյակներն են և կոչվում են «Հավի ճուտեր», վորովհետեւ յերկուսն ել Տաճկաստանից յեկել են միասին, միասին յեղել են վորբանոցներում, միասին մտել են գործարան, միասին աշ-

խառում են միևնույն խառատի գեխում, միևնույն բրիգադում. — յերկուսն ել հարվածային են և ենտուզիաստ բանվորներ։

Ինչպես սրանք, այնպես ել գործարանի հարվածային բանվորների մեծ մասը, կարելի յե ասել, բուռն սերունեն սովորելու, կատարելագործվելու։

Յեվ գործարանն, իհարկե, հնարավորություն կտանը՝ իրենց նպատակին հասնելու, վորովհետեւ կաղըրերի կատարելագործությունը գործարանի առաջնակարգ խնդիրներից մեկն է։

Ինքը՝ գործարանը ևս, մեծ հեռանկարներ ունենալով, ձգտում է կատարելագործվել և ընդարձակել իրարտադրանքն ու գործունեյությունը։

ԱՐԱՋԻ

ԿԱՐԲԻՏԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Յերևանի կայարանի մոտ՝ գլուխ է բարձրացրել սև քարեց մի շենք. նրա խողովակից որ ու գիշեր ծուխ է բարձրանում, ու անընդհատ լովում է հնոցի յեռանդուն բռնոցը:

Դա կարբիդի գործարանն է, վորը թեպետ մի քանի տարվա պատմություն ունի (նա հիմնվել է 1927 թվին), բայց մեր Միության մեջ յերրորդ տեղն է բռնում իր արտադրությամբ:

Բայց ի՞նչ է կարբիդը և ի՞նչ նշանակություն ունի նա արդյունաբերության մեջ:

Կարբիդն ստացվում է քարածուխից (կոկսից) և կրից, վորոնք ուժեղ ելեկտրական բոցի, կամ ինչպես ասում են—վոլտյան աղեղի ազդեցության տակ միանում են և տալիս են քիմիական մի նոր բաղադրություն—կարբիդ:

Կոկսը ստացվում է Դոնբասից, կրաքարը—Դավալից. գործարանում կա մի առանձին հնոց, վորը այդ կրաքարից կիր է պատրաստում:

Մրանք են ահա կարբիդի գործարանի աղբյուրները, վորոնք Յերևանի հիդրոկայանի եներգիայի ողնությամբ միանում են, տալիս այն հրաշալի բաղադրությունը—կարբիդը:

Կարբիդը ներկայումս, կարելի յե ասել, որվա հե-

րուն ե: Զկա մի գործարան, մի արհեստանոց, մի խոշոր շինարարություն, վոր կարբիդի կարիք չունենա:

Կարբիդի թանկարժեք մասը նրանից ստացվող գազն ե,—ացիտիլենը: Յեթե վերցնենք մի կտոր կարբիդ և վրան ջուր ածենք, իսկույն կնկատենք գոյացող գազի հոսանքը: Ահա այս գազը, միացնելով թթվածնի հետ, (նույնպես գազ), վառում են հատուկ պատրաստած «կարբիդի լամպերի» մեջ, և ողտագործում այդ տաքությունը մետաղների մասերն իրար հետ զոդելու համար: Զերմության աստիճանն այնքան բարձր է, —մոտ 4000 աստիճան, վոր նրա մեջ հալվում են բոլոր մետաղները. հենց վոր կարբիդի լամպի բոցն ընկնում ե մետաղի կտորների արանքը, նրանց ծայրերն իսկույն հալվում են ու միանում այնպես ամուր, կարծես յերբեք իրարեց բաժանված չեն յեղել: Կարբիդի բոցը վոչ միայն կարող ե զոդել մետաղի մասերը, այլ և կտրել, բաժանել, յեթե այդ անհրաժեշտ է:

Բայց դրանով չի վերջանում կարբիդի նշանակությունը. ներկայումս մեր խորհրդային գիտնականների խոչոր գյուտի չորրհիվ նրանից կարելի յե ստանալ և արհեստական կառուչուկ: Այդ գյուտը մի ահագին հեղաշրջում և առաջացնում Խորհրդային Միության տընտեսության մեջ, ազատելով մեզ արտասահմանի կառուչուկի ներմուծումից:


Ճիշտ վոր, կարբիդը հրաշագործ նյութ ե...

Մի ուրիշ նորություն ել՝ կառուչուկի ապագա հսկա գործարանը պիտի կառուցվի Յերևանում:

Բայց կարբիդի արտադրության համար անհրաժեշտ են հերոսական բանվորներ: Դրանով ել ապահովված ե կարբիդի գործարանը.—նրա բանվորության 70 տոկոսը սոցմքաման մեջ ե, իսկ 55 տոկոսն արժանացել է հարվածայինի կոչման:

Մաեք գործարանը. ահա բանվորները, կապույտ ակնոցներն աչքներին, լուրջ և աչալուրջ կանգնած են

վառարանի առաջ, և հետևում են նրա կրակին։ Սաստիկ տաք ե խմում յերեսներին—3000 աստիճանի տաքություն, բայց նրանք դրանից չեն վախենում։ Նրանք յերեք հերթի բաժանված, գիշեր յերեկ վարում են այդ



Հնկ. Ռվայան Մանուկ

գժվար ու նուրբ գործը, վորը պահանջում է մեծ ուշադրություն և լարվածություն։

Նրանք միշտ վառ են պահում կրակը, միշտ բարձր—կարբիդի վորակը…

Ծանոթացեք բանվորների հետ։ ահա ձեր առաջ ե հնոցավարների բրիգադի ավագ վարպետ Մանուկ Ռվայանը, նա դեռ 1930 թվին Հայաստանի Կենտղործկոմի կողմից արժանացել է գերհարվածայինի կոչման, իսկ ՀԱՄԽ-ի կողմից—Հանրապետական կարմիր տախտակին։ Գործարանում նա մի քանի անգամ պարզեատրվել է թե փողով, թե հագուստով։ Նրա անունը գրվել է կարմիր տախտակի վրա։ Նա ծնվել է 1898 թվին, կաղը վաճառականություն։ 1917 թվին գաղթել է Հայաստան, մասնակ-

ցել է քաղաքացիական կռիվներին, վորպես կարմիր բանակային։ Գործարանում աշխատում ե նրա հիմնվելու որից։ 1927 թվից նա նպաստում է գործարանին նաև իր գյուտերով, վորոնցից մեկն արդեն գործադրվում է։

Ահա և մյուս գերհարվածայինը—Կիրակոսյան Հրաչը։ Նա նույնպես աշխատում է գործարանում նրա հիմնվելու որից—կրի մասում։ Նա բրիգադավար է 1928 թվից, և հարվածային 1931 թվից։ Նույնպես մի քանի անգամ պարզեատրվել է և արժանացել կարմիր տախտակի։ Ծնվել է 1902 թվին, Թյուրքիայում—Արմացում։ Գաղթել է պատերազմի տարիներին։ 1925 թվից աշխատել է Յերեվանում, սկզբում կրամիտի գործարանում, իսկ կարբիդի գործում—մասնակցում է հիմնվելու որից։ Իր աշխատելու ժամանակամիջոցում նա վոչ մի որ պարապուրդ չի ունեցել։ Շնորհիվ Կիրակոսյան Հրաչի լուրջ զեկավարության, կրի վառարանի գործում մտցրված ե խոշոր ռացիոնալացում։ առաջ կրի վառարանը լցնում ելին 18 հոգով, այժմ նույն գործը կատարվում է 8 հոգով։

Ինչպես ասացի, այս ընկերները մենակ չեն։ Նրանք շրջապատկած են հարվածային ընկերներով։ Մրանց հերոսական ջանքերի չնորհիվ ե, վոր գործարանը տարեց-տարի ավելացնում է իր արտադրանքը, չնայած մի շարք վոչ բարեհաջող պայմանների։ Սկսելով իր գործը 1927 թվին՝ 1500 տոննի համեստ պլանով, գործարանը 1932 թվին իր արտադրանքը հասցել է 2,728 տոնն կարբիդի, իսկ ներկայումն որական տակիս ե 10 տոննից ավել։ այս տեմպով ընթանալով, տարվա վերջը գործարանն իր արտադրանքը կհասցնի 3000 տոննի։

Ահա այս հերոսական բանվորներն են անշեղ պահում կարբիդի գործարանի հնոցները։

Անշեղ կրակ կա կարբիդի հերոսների կրծքում…

կոլեկտիվ—արտել։ Կարի մեքենաների և այլ պարագաների մի մասը հայթայթում են իրենք՝ կոլեկտիվի անդամները, մի մասն ել Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը։ 1924 թվին կոլեկտիվն ընդարձակվում է, աշխատողների թիվը հասնում է 60 հոգու…

Վ. ՆՈՐԵՆՑ

ԿԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՆ ՈՒ ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ


Կապույտ մզկիթի մենավոր ու լուռ մինարեթի ճիշտ գիմացը աղմկում և կարի գործարանը՝ կառուցված վարդագույն տուֆ-քարից։

Ընդամենը մի յերկու տարի առաջ, գորշ ու անկերպարան, անկարգ և խառն ի խուռն տնակների և խանութների մի զանգված եր ծածկել այն տարածությունը, վորի մրա այժմ կառուցված է կարի գործարանի շենքը։

Մաքուր, վարդագույն դրավչությամբ արտաքին։ Լայն ու լուսավոր պատուհանները անքթիթ նայում են կապույտ մզկիթին՝ կարծես զարմացած նրա գոյության վրա։

Դեռ հեռվից լսվում է գործարանի անընդհատ աղմուկը։ Ներս մտնելիս այդ աղմուկը մի առ ժամանակ մարդուն դնում և արտասովոր վիճակում, իսկ ապա կամաց-կամաց նա զառնում է սովորական և ընտանի։ Լայն պատուհաններից և ապակեծածկ առաստաղից ներս խուժող առատ լույսը վողողում է մարդկանց ու մեքենաները, աշխատանքն ու աղմուկը…


Կարի գործարան։ Այս տարի լրացավ նրա գոյության տասը տարին։ Շատ ուսանելի յե նրա կարծ պատմությունը։ 1923 թ. մայիսի 1-ին, աշխատանքի բորսայում ցուցա կագրված 7 գործագուրկներ, գորացրված՝ նախկին կարմիր բանակայիններ, կազմակերպում են կարողների մի



Յեկ այդպես, տարվե տարի… իսկ այս տարի, իր զոյության տասնամյակին, կարի գործարանը հանդիսանում է մեր թեթև արդյունաբերության լավագույն ձեռնարկներից մեկը՝ 700-ից ավելի կադրային բանվորներով և ամսական 5-7 հարյուր հազար ոռոքու արտադրանքով։ Նեղ, տնայնագործական, պրիմիտիվ աշխատանքի ձեւվերից սկսելով՝ կարի գործարանը արդեն գործարան է բարիս լայն իմաստով, տեխնիկական և աշխատանքային իմաստով, գործարան, վոր իր արդֆինալանները կատարելու և գերակատարելու լավագույն որինակ-

ներ և տէկլ։ Ճիշտ ե, նա ունեցել է նաև թերակատարումներ, ձեղքվածքներ, սակայն հիմնականում՝ նա յեղել է իր արդ։ Փինագլանները պատվով կատարող գործարաններից մեկը Յերեվանում։ Հենց դրա համար գործարանը 1931 թվին արժանացել է կարմիր դրոշի շքանշանին։

Այս տարվա առաջին քառամսյակում գործարանն ունեցավ պլանների թերակատարումներ։ Սակայն աշ-



խատանքի կազմակերպմամբ, սոցմբցման և հարվածայնության ծավալմամբ, այս, յերկրորդ քառամսյակում վոչ միայն կատարվում և գերակատարվում է պլանը, այլև լրացվում ե այն ձեղքվածքը, վոր առաջացել և առաջին քառամսյակում։

Մայիս ամսին՝ նախատեսված բանվորական ուժի 95 0/0-ով՝ ամսական պլանը կատարված է 105, 2 0/0-ով։

Գործարանի նոր գիրեկտորը՝ ընկ. Առաքելյանն ամենայն հաստատակամությամբ և բայլչելիյան վճռականությամբ պնդում է, վոր այսուհետեւ կարի գործարանը չի ունենալու պլանի թերակատարումներ։

Կարի գործարանը, ինչպես մեր լայնածավալ, մեծ,

խորհրդային յերկրի բոլոր գործարանները, ունի իր հերոսները, իր լավագույն հարվածայինները, վորոնց պետք է ճանաչի մեր յերկիրը։ Ահա այդ լավագույններից մի քանիսը։

Ընկ. Հմայակ Գրիգորյան։ — 23 տարվա բանվոր է. Կարի գործարանում աշխատում է արդեն 10 տարի, 1931 թվից առաջ ե քաշված, վորպես ցեխի վարիչ։ Ընկ. Գրիգորյանի ցեխը իր պլանները կատարել է 185 0/0-ով, 1932 թվին 152 0/0-ով։ Ընկ. Գրիգորյանը պարզեվատրվել է մի քանի անգամ։ Նրա մասին մի քանի թղթակցություններ են լույս տեսել մեր մամուլում։ Ընկ. Գրիգորյանը կուսակցության անդամ է 1930 թվից։ Նա պատվով կատարում է իր՝ կոմունիստի ավանդաբարդային դերն արտադրության մեջ։

Ընկ. Աստղիկ Ղափրամանյան։ — Որինակելի բանվորուհի, գործարանում աշխատում է 1923 թվից։ Իր հարվածային աշխատանքի համար պարզեվատրվել է, անունը բարձրացվել է կարմիր տախտակին, նրա լուսանկարը լույս և ընծայվել մեր մամուլում։ Ընկ. Զահրամանյանը իր պլաններն ավարտում է գերակատարումով, հասցնելով 110 0/0-ի։

Յեղ այսպես շատ շատերը։

Կարի արդյունաբերությունը, պատրաստի հագուստների արտադրությունը մեղ մոտ շատ նոր է։ Առաջին գործարանը հիմնվել է 1923 թվից։ Սակայն այն ժամանակ և հետագա մի քանի տարիներում նա գործարան չեր, ավելի շուտ արտել եր, իսկ հետագայում վերածվեց գործարանի և մի քանի տարում դարձավ մեր թեթև արդյունաբերության կարևոր ձեռնարկներից մեկը։

Այդ գործի կազմակերպումը շատ բանով պարտական է այն հերոս բանվորներին, վորոնք գործարանի կազմակերպման սկզբից և շարունակաբար բայլչելիյան հերոսությամբ առաջ են մղում նրան։

Նա իր հպարտ գլուխը խոնարհել և և շրթունքներով
դիպում ե Զանդույի ափերին:

Զ՝ կան վոչխարի հոտերը, նրանք գնացել են արո-
տալից վայրերը. կուլակ Ղուկասյանը կոլեկտիվացման
հիման վրա ջախջախված ե, բայց նա քանի վոր դեռ իր
դասակարգի հետ միասին ամբողջովին չի վոչնչացված

ՍԻՐԸ

ԲԵՂՄԱՎՈՐՎՈՂ ՅԵՐԿԻՐԸ

Բարձր ժայռի կատարին կանգնել եր Սաֆարն ու
դիտում եր զի՞ւ Զանդուի ընթացքը: Գետը դարերով կու-
տակած իր մոլեգնությամբ զարկվում եր ժայռերին. յեր-
բեմն պոկում մի քանի փթած մամուռ, կամ մի փիրա-
ցած քարի կտոր ու կարծես ինքն ել հոգնած իր խենթու-
թյունից, չարածնի մանկան պես զնում եր կորչելու հե-
ռուներում:

Սաֆարը նայում եր ժայռի ահռելի բարձրունքից
գեղի ներքե, ինչ վոր մտածում՝ և ելի սուլոցով դառ-
նում եր գեղի իր վոչխարներն ու այծերը, վորոնք թոչ-
կոտում եյին արոտից-արոտ, յերբեմն ել ժայռերի ծայրե-
րին մի կտոր խոտ պոկելու ցանկությամբ:

Զանդուն հոնդալով թոչկոտում եր աննպատակ ու
անոգուտ:


Հսկայական տարածության հողամասեր նույնպես
աննպատակ ու անոգուտ տոչորում եյին արեվի տապից:

Սաֆարը նույնպես հսկում եր կուլակ թորգոմ Ղու-
կասյանի վոչխարների հոտին, սպառելով իր յերիտա-
սարդական յեռանդը: Այսպես եր գեռ այն ժամանակ
յերբ բայլչեկյան տեխնիկան չեր հաղթել տարերքին:

Այժմ 1933 թիվն է:

Սաֆարը դարձյալ Զանդուի ափին ե:

Բայց այլեվս չկա անմատչելի բարձրաբերձ ժայռը:



Ընկ. Շագոյան Սաֆար

ատամների անզոր կրծտոցով և նայում Սաֆարի ես նոր
դործին:

Սաֆարի գործը միլիոնների գործը, իրոք նոր և ու
առշեցուցիչ:

Սաֆարը լծված ե Քանաքեռնեսի կերտման գործին:
Քանաքեռնեսի առաջ իր խոր կուրծքն ե բացում անհիշե-
լի ժամանակներից կարծրացած ժայռերը և ինչպես բա-
չանի, յերբ այդ բանը ցանկանում ե Սաֆարը ու Սա-
ֆարների զեկավար բայլչեկյան կուսակցության պող-
պատյա կամ քը, և ինչպես բաց չանի յերբ Քանաքեռնեսի
հարկավոր և սոցիալիստական Յերեվանին, Խորհրդային

Հայաստանին՝ ավելին—յեղբայրական Անդրկովկասին՝ Ելեքտրոկայանների Անդրկովկասյան դաշինքը գլուխ բերելու համար:

Կարբիտը, — 2-րդ կարբիտը, ծրագրվող կառւչուկի գործարանը, Դավալմի ցեմենտի գործարանը և այլ շատ ու շատ գործարաններ սրտատրով սպասում են Քանաքեռուգեսի Ելեկտրական համբույրին, կենսատու մերձեցումին, բեղմանվորելու համար մեր յերկրում դարեկուր նինջով ամուլ մնացած հարստություններին:

Սաֆարը լավ է գիտակցում այդ բանը: Դրա համար ել նա իր ապրիլ ամսվա պլանը կատարել է 122 տոկոս, իսկ մայիսին 124 0/0-ով:


Նրա 12 հոգինոց բիրդաղան հող է փորում. նըրանք Քանաքեռուգեսի ամենալավ հողափորներն են, նըրանց բրիգադայում վոչ մի դժբախտ դեպք չի յեղել, վորովհետև բոլորը գիտեն—թե ինչպես պիտի զարկել քլունկը, գիտեն թե յերբ է փլվելու, ջարդված ժայռը և այլ շատ մանրամասնություններ. Նրանք իրենց ձեռքի տակ յեղած տեխնիկական միջոցներն ոգտագործում են լրիվ:

Այն ժամանակ, յերբ Արևատյանի բրիգադում 8 մարդ է աշխատում մի վագոնետկայի վրա, Սաֆարի բրիգադում յերեք հոգի յեն աշխատում և դրա համար ել նրա բրիգադում յուրաքանչյուր անդամին ամսական աշխատավարձ է համում 180-ից մինչև 300 ռ.:

Սաֆարը դեռ 1928 թվից վերացրել է իր անդրագիտությունը և այժմ կարգում է «Խ. Հ.» ու «Հարվածային Բանվոր» թերթերը:

Բայց այդ բավական չենա սիրել է Քանաքեռուգեսը, նա ուղղւմ է մասնակցել Քանաքեռուգեսի հետագա բոլոր պողեսներին, դրա համար հարկավոր է կիրառել առաջնորդի ցուցմունքը՝ «տիրապետել տեխնիկային»: Այս բանն ել լավ է հասկացել Սաֆարը, դրա համար ել նա Ելեկտրո-տեխնիկան տիրապետող խմբակի ամենաակտիվ և առաջավոր սովորողն է:

Յեվ ահա, յերբ սաֆարների հարվածային աշխատանքով 1934 թ. կ' գործադրվի Քանաքեռուգեսը ընկ. Սաֆարը, Զանգույի ափերի ու ժայռերի ծերպերի նախկին հովիվը, բայլշեկիլյան կամքով ձեռքի մի շարժումով շուրջ կ' տա Ելեկտրական կոճակը ու նրան՝ նախկին հովիվին կհպատակվեն տարերքը, գիտ Զանգուն կյենթարկվի նրա կամքին ու կյանք կառնեն կաճեն ու կզրդանան մեր յերկրի բեղմնավորված ընդերքները:



Ծխախոտագործարանի հարվածային Սերգեյ Մակարյան


Ա. ՏԵՐ ՀՈՎՆԱՅԻՑԱՆ

ՇԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Մեր յերկրի գործարանային ընտանիքի թափ առաջ վերելքում ակնառու անդ ունի ծխախոտի գործարանը։ Բավական ե թեկուզ թռուցիկ ակնարկ նետել թվերի դեպի վեր յելնող աստիճանին, դրանում համոզվելու համար։ Այն ժամանակ, յերբ ժառանգություն ստացված «Հայկոոպ Արամազդ»—ծխախոտի գործարան կոչվող խղձուկ այդ թզուկն ուներ 9 բանվոր 2 լցնող մեքենայով, 1925—26 թ. արդեն թոփչք և կատարում, արտադրելով 24 ու կես միլիոն գլանակ։ 30 թվին հասցնում ե 171 միլիոն գլանակի և 14 հազար կիլո ծխախոտի, իսկ այս տարվա պլանը նախատեսել ե 6 հարյուր միլիոն գլանակ և 20.000 կիլո ծխախոտ։ Աճման նույն թափն ունի և բանվորության կազմը։ Մինչդեռ բանվորության թիվը 9-ից 25—26 թվին հասնում է 27-ի, իսկ այս տարի 190 հոդի յե։ Նախկին յերկու լցնող մեքենայի փոխարեն յերկարավուն կորպուսներում բզզում ու գզրդում են 22 լցնող և 25 գիլգային մեքենաներ, 3 դարսող ագրեգատ, 2 ծխախոտ կոտորող մեքենա, 3 տոկարնի գաղպայակ և շատ ուրիշ մեքենաներ։ Գործարանի արտադրության ծավալման հետ միասնական անընդհատ ծավալվում ու խորանում ե բանվորների մեջ տեխնիկային տիրապետելու, հմտանալու աշխատանքը։ 1925—26 թվականին մեկ որում 2.598 գլանակ լցնող բանվորը 30 թվին լցնում է 6,474 գլանակ, իսկ այս տարի արդեն 15,167 հատ։

Երադործելով առաջնորդի հիմնական լոգունգը տեխնիկան յուրացնելու բնագավառում։

Որինակելի այս վերելքում հիմնական դեր ունեն զործարանի հիմնադրման որից ծանրությունն իրենց ուսերին առած և հետազայում շարքերը խտացնող բան-



Ընկ. Աղավնի Մելիքյան

վորների կուռ, միասնական ընտանիքը, վորոնք լծված մեղվաշան այդ աշխատանքին հոգացել են յուրաքանչյուր պակասուի համար, իսկնով ու բերկրանքով են լցվել ամեն մի հաջողությունից։

Ահա մեկը նրանցից։ Համեստ ու բարեհամբույր պարզ մի ընկեր։ Նա գործարան ե մտել 24 թվից, նա յեղել և ամենաակտիվ աշխատողը գործարանի կուսակցական և հասարակական կյանքում, նա յեղել և ծավալման թափի կայուն հենարաններից մեկը։ Դա Գեղամ Միհիքայանն է, բանվորների իրենց ծոցից դուրս յեկած առաջաված դիրեկտորը։

Պատեցեք ցեխերը. ամեն տեղ կհանդիպեք այդ կորչ-
ֆեյներին:

Սերյոժա Մակարյանը. Լցնող և գիլզային ցեխի
վարիչ, վոր այդպես ել Սերյոժա յե մնացել իր ընկեր-
ների համար, 54 տարեկան ե, 40 տարվա բանվորական
ստաժով: Անցյալում թիֆլիզում մասնավոր գործարա-
նատերերի քմահաճույքներին յենթակա, սակայն չի
ընկձվել: Քսան տարեկանից մտել ե ՍԴ-ի շարքերը,
ակտիվ մասնակցություն ե ունեցել գործադուլներին:
18 թվից հիսաթափվելով ՍԴ-ից, հեռացել ե և այժմ
կոմ. կուսակցության թեկնածու յե: Հասարակական բո-
լոր աշխատանքներին ակտիվ մասնակցում ե. 30 թվից
Քաղխորհութեան անդամ ե, իսկ 31 թվից արժանացել ե աշ-
խատանքի հերօսի կոչմանը:

Մելիքյան Ադալին յեվս հիմնադրման որից գործա-
րանում յեռուն աշխատանք ե տանում: Տեսակավորման
ցեխի կուսկազմակերպիչն ե, խմբկոլի նախագահը, հար-
վածային բանվորուհու պատվավոր կոչումով: Համաշ-
խարհային պատերազմի զոհերից ե նա՝ Յերեվան փա-
խած: Անդրագետ ե յեղել, սրան-նրա դռանը, ոփիսնե-
րում սև աշխատանքով քարշ ե տվել իր գոյությունը:
22 թվից գործարան ե մտել, մերվել ե այդ մեծ ընտանի-
քում, վերացրել ե անդրագիտությունը և այժմ տեսա-
կավորման ցեխի պատի թերթի խմբկոլի որինակելի ղե-
կավար ե: Յերբ փորձեցի զուզահեռ անցկացնել նրա
անցյալի և նոր կյանքի մեջ նա, ներքնապես մի տեսակ
վոստնեց, առես անցյալի հիշողության հարվածից ցնց-
ված:

— Աղջիկս սովից մեռավ, տղես վորբանոցից գողա-
ցա վոր նա յել չմեռնի: Հիմի իմ կյանքը ուրախու-
թյուն ա, յերեխեքս սովորում են, լագեր են գնում, ինքս
սանատորիա յեմ գնացել:

Շատ են նրանք, յերկար ե այդ շարքը և թվերը
պերճախոս են: 1933 թիվը միայն բավական ե այդ պատ-
կերը տալու համար: Առաջին յեռամսյակում 160 բանվո-

րից և 25 աշակերտից 106-ը ընդգրկված են յեղել սոց-
մբցման և հարվածայնության շարքերում, իսկ ընդամե-
նը մեկ ամիս անց, 185-ի յե բարձրացել այդ թիվը,
աննշան բացառությամբ ընդգրկելով ամբողջ գործա-
րանը:

Սակայն գործարանի և նրա արտադրության հե-
տագա ծավալումը պայմանավորված է շենքով: Մոտիկ
ժամանակ, ոգոստոս ամսին փոխադրվելով գործարանի
նոր շենքը՝ իր տեխնիկական բոլոր հարմարություննե-
րով, այդ հնարավորությունները ընդարձակվում են,
վորին սպասում են բոլոր բանվորները, անհամբերու-
թյամբ իրենց յեռանդի առավելագույնը հրապարակ բե-
րելու համար:

տարիատի և աշխատավորության համար երաց և ամեն ինչ նրանց միջոցով. ընդհանուրի այս գիտակցությամբ են լծված նաև մեր պրոլետարիատի և աշխատավորության մի ջոկատը հանդիսացող Տրամվայի 450 բանվոր-աշխատավորները և այդ և պատճառը, վոր նը-


Ա. ԽԱՌԴԻԱՐՅԱՆ

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԴԱՐԻ ՄԱՐԴՈՒՆ- ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՎՈՏՔԵՐ.

Հին եր Յերեվանը և փոշոտ, ինչպես ամեն մի հնութիւն: Բայց նա անընդհատ մաքրվում է և անընդհատ նորոգվում: Յեզ տասնյերեք տարվա խորհրդային կյանքից հետո, այսոր նա ել և անձանաչելի, ինչպես ամեն ինչ մեր յերկրում: Մի ծայրում դարերով իր դեմքը չփոխող այգեգործի դադաների տեղ լայնանիստ գործարաններն են բուսել և ճահիճների գորտերի անդուրեկան կոկորդի տեղ մեքենաների ուրախ խլրտյունն ե բոնել. մյուս ծայրում՝ հին սեմինարի կակարտավոր խաղաղությանը փոխարինել ե բարձրագույն գլուխութերի յերիտասարդ աղմուկը, կենարոնը գրավել են վողջ յերկրին սպասարկող հիմնարկները: Յեզ յերբ այսպես յեղակ բանվորների, աշխատավորների, ուսանողության բազմազար մասսան պահանջեց փոխադրական արագ միջոց: Ելեկտրական դարի մարդուն, ելեկտրական վոտքեր—Տրամվայ:

Պրոլետարական պետության մեջ ամեն ինչ պրոլետարիատի և աշխատավորության համար ե, այս սկզբունքին հավատարիմ Խորհրդային իշխանությունը Տրամվայ տվեց Յերեվանին:

Պրոլետարական պետության մեջ ամեն ինչ պրոլե-




Ընկ. Աւլիխանյան Ալեքսանդր

րանք իրենց աշխատանքի ասպարիզում յերբեք պլանների ձեղքվածքներ չեն տալիս: Ծրագրված 8 վագոնի փոխարեն այժմ 16 վագոն ե աշխատում Յերեանում, իսկ մինչև տարվա վերջը 27-ը կաշխատի. մինչև հունիսի 1-ը փոխադրված ե 3 միլիոն մարդ, վորով փոխադրման պլանը գերակատարված ե 15 տոկոսով. վագոն կիրովետրի արժեքը 9 ոտորլուց իջեցված ե 1 ո. 20 կոպեկ: Մինչև տարեցերջը կ'ստացվի 2 երեկարագնաց, վորով հնարավոր կ'գառնագիշերները Տրամվայի յերթեկության դադարի ժամանակ ապրանքների փոխադրում կատարել Տրամվայի գծերով, այդպիսով հսկայական չափերով արա-

դացնելով բեռնաշրջանառությունը, եժանացնելով փոխադրությունը, վերջ տալով փոխադրական դժվարություններին:

Տրամվայի բանվորներից 110 հոգի հարվածային կոչման տեր էն, պետք է ծանոթանալ նրանց՝ մեր որերի հերոսներին։ Ահա նրանք։



Ընկ. Մանուկյան Մանուկ

Աւրիսանյան Ալեքսանդրը. — 35 տարվա աշխատանքի ստաժ ունի «Դիմադրա Սաշան» ինչպես կոչում ելին նրան Հայկինոյում կամ «պապաշան» ինչպես Տրամվայի աշխատողներն են անվանում։ 11 տարեկան հասակից նա սկսել է իր աշխատանքը, իրրև փականագործի աշակերտ։ Ապա անցել է Նավթ-արդյունաբերության, Թիֆլիսի տրամվայի, Յերեվանի Ռադիոյի և հեռախոսի սարքավորման աշխատանքների բոլով։

Յերեվանի հեռախոսի անցկացման ժամանակ հա-

տուկ հարմարություններ ստեղծեց, վորոնք ոաշխատալիքացիայի յենթարկեցին գործը և մինչև այժմս ել գործադրովում են. իր արժեքավոր աշխատանքների համար 1929 թ. պարզեատրվել է աշխատանքի դրոշի շքանշանով, իսկ 1930 թ. արժանացել է աշխատանքի հերոսի կոչման, առաջ քաշվելով Հայկինոյի դիրեկտորի տեղակալի պաշտոնով, այժմս ել Յերեվանի Տրամվայի դիրեկտորի տեղակալն է. նա գեռ 1903 թվից կուսակցության անդամ է, վորի համար և բազմաթիվ անդամ բանտ է դրվել ու աքսորվել ցարի կառավարության կողմից։ Նա իր կյանքը մաշել է հանուն պրոլետարիատի հաղթանակի, բայց նա մեր որերում իրան ծեր չի համարում և բայց եկեկյան յեռանդով աշխատում է։ Ինչ տեղ մի զժվար գործ պատահի— ասենք թե տրամվայի վագոնը գծից դուրս է ընկել, մեքենայի կապը բռնեց պապաշան՝ չնայած իր Փիզիկական պակասության, վորը յերկարամյա բանտերի պարգևն է, (մի վոտքը թուլացել է) թեվավորի պես կ՝ հասնի և հորդորելով, սաստելով, անձամբ գործին կզէլով դժվարությունները կ՝ հաղթահարի։ Պապաշան սոսկ աշխատող չէ, այլ գործի հոգին, նա աշխատանքի կենդանի դրոշակ է և այդ և պատճառը, վոր իր հետ աշխատողները այնպես սիրում են հարգում են նրան։

Մանուկյան Մանուկ. — Յերիտասարդ անկուսակցական բանվոր է սա, յեղել է կոչեկ սրփող, կոչկակարի, հյուսնի աշակերտ. ահա 10 տարի յե, վոր հյուսն է, հիմա ել առաջ է քաշվել, վորպես տասնապետ։ Բանֆակը ժամանակավորապես թողել է՝ արտադրության շահը ի նկատի ունենալով։

Նա հնարել է մի մեքենա, վորով սվաղն ու ծեփը— գաջի և կրի վեր հանելր դեպի շենքի բարձր հարկերը չափազանց հետացնում է, այս գյուտը տրամվային տվել է 3000 ոռուրու խնայողություն։

Ամեն ինչ պրոլետարիատի և աշխատավորության համար, բայց և ամեն ինչ նրանց միջոցով՝ կոմկուսակցության դեկավարությամբ՝ այս նշանաբանին անդադան կերպով հետևում են Տրամվայի հարվածային բանվորները։

ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԵՆ

ԿԱՆՍԵՐՎԻ ՏՈՒՓԵՐԸ ԳԼՈՐՎՈՒՄ ԵՆ

Հենց այստեղից՝ դարպասի մոտից սկսվում է Կոնսերվի գործարանի թնդացող առորյան:

Ներս ես մտնում բակ: Քո առաջ բացվում ե ընդարձակ մի տարածություն՝ տեղ-տեղ փոքրիկ ծաղկանոցներով, կանաչներով, վեր փնջած ծաղկի նման զարդարում են բակի թարմ, յերիտասարդ կուրծքը: Գործարանի հին ու նոր շենքերի հսկա կորպուսները վեր են խոյացել յերկնքի կապույտում: Հին շենքերի պատերը գունատվել, գորշացել են: Ասես ել հրապույր չունեն: Նորերը գունեղ քարերից են՝ ճերմակ, վարդագույն, կապույտ: Դրանից ե, վոր արեվի վոսկեջրած շողերն ամեն առավոտ չուտ են գրկում նրանց վերեվի հարկերը, և յերեկոներն ել բաժանվում են դժվարությամբ, կարոտից հոգնած, թուլացած թեվերով...


Շենքերից մեկը դեռ չի ավարտված: Նրա ամենավերեվի հարկում դեռ շարում են վարպետները: Արդեն պատրաստ ե առաջին հարկը, յերկրորդ հարկը: Յերեսի յերրորդ հարկ ել կլինի: Գուցե և չորրորդ: Ո՞վ կիմանասկիզբն ու վերջը, քանի դեռ շարում են անընդհատ, անդադրում...

Գործարանի մոտով ձգվում են տրամվայի չորս ու լուսերը: Ամեն որ տրամվայներն անցնում են գրնդոցով,

ոելսերը շաջում են դվարիթ զարկերով: Բանվորական թաղը թնդում է յերկաթեղեն կարոտից:

Մտնում ենք գործարան, ձուկ վերամշակող ցեխը: Վոր կողմն ել վոր գնում ենք՝ ձկան հոտ:

Մանոթանում ենք՝ մի շարք հարվածայինների—վաղարշակին, Մամիկոնին, Փայլակին... նրանք շատ հաճախ մինչև ուշ յերեկո մնացել են մեքենաների մոտ,



Ընկ. Վաղարշակ Թառոյան

կարգի բերել դրանց ջարդվածքը, պակասը... Նրանք կարգի բերել դրանց ջարդվածքը, պակասը... Նրանք լավ են գիտակցել, վոր աշխատանքը պատվի, հերոսության ու անձնվիրության գործ ե և դրա համար ել թույլ չեն տալիս, վոր կուս. Յերկոմի փոխանցիկ դրոշն իջնի կոնսերվի գործարանի ճակատից:

— Քանի մենք կանք այստեղ, նա պետք ե փողփողացնուել, գործարանի ճակատին, — այդպես ե յերդվում

ամեն մի հարվածային: Այդ են վկայում նաև նրանց
խնդում ու ջերմ հավատով լի աչքերը...

Այդ հավատից ե, վոր Կոնսերվի հաղարավոր տուփեր
այսպէս չարաձմի կչէոցով ամեն որ գլորվում, գնում են
շարվելու բանկոսպների ու գյուղկոսպների դարակնե-
րում, վորպեսզի հետո յել զարդարեն յերկաթի ու դաշ-
տերի հերոսների ճաշի սեղանները:

Թիթեղի ցեխումն ենք, վորի վարպետն ե Վաղարշակ
Թառոյանը: Միջահասակ, բարալիկ, չոր-չոր դեմքով



Ժարդ ե նա: Սկզբում յեղել ե սեղին գցող, կատովչչիկ,
բրակովչչիկ և այդպես վեր՝ մինչև ցեխի վարպետի պաշ-
տոնը:

Մեծ գործ ե կատարել Վաղարշակը ուսցոնալիզա-
ցիայի բնագավառում: Շտամպ մամուլը վերասարքավո
րել ե այնպես, վոր այժմ 1 թիրեղից 24 կափարիչ ե
ստացվում, առաջի 20-ի դիմաց... Այդ ոսցիոնալի-
զացիան միայն մեկ սեղոնում 16.000 ռ. խնայողություն
ե տալիս: Վաղարշակի մացրած մի ուրիշ ուսցիոնալիզ-
ացն հետեւանքով բանուժի կրծատում ե կատարվում, ո-
րեկան 30-40 կիլո բենզին տնտեսվում. վերացվել են հա-

ճախակի կրկնվող պարապուրդները: Վաղարշակը մե-
շարք անդամ պարզեվարպվել ե, բարձրացվել կարմիր
տախտակին, ստացել գերհարվածայնի տոմս: Ընտանիքն
ապրում ե մի լուսավոր, արեվոտ սենյակում: Ամսեկան
250 ռ. աշխատավարձ ե ստանում, կնոջ ու յերեխաների
հետ հաճախ կինո և թատրոն ե գնում:

1932 թվից Վաղարշակը պրոլետարիատի ավանդար-
դի՝ լենինյան կուսակցության շարքումն ե:

Խնդում ժպտով մեզ ե դիմավորում հաղթ կազմված-
քով մի յերիտասարդ: Բանջարեղենի ցեխի կոմսոմոլի
բջիջի՝ մի քանի անգամ վերընտրված քարտողարն ե
դա—Մամիկոն Խաչատրյանը: «Հողի տղա յե Մամիկո-
նը», ինչպես ընկերներն ասին նրա մասին: Բարի դեմք,
խելացի, մտածող աչքեր ունի: Հենց առաջին զբույզից
տարվում ես նրանով: Աշխատում ու ցեխը դեկավա-
րում ե այնպես՝ ինչպես փորձված լողվորն ե թրի պես
կտրում, անցնում ջուրը: Ցեխում աշխատանքը գոր-
ծարքայնով ե: Իսկ Մամիկոնն ամսեկան ստանում ե
միջին թվով 200 ռուբլի:

Առաջներում տուփերի զակատը (փակելը) լավ չեր
կատարվում: Յերբեմն տուփերը յետ եյին վերադարձ-
վում: Ամենքը վողեվորված ավելացնում են, վոր այժմ
ել բրակ չեն տալիս, բրակը յոք գերեզմանաբարի տակ են
քաղել:

Մամիկոնը նշանավոր ուսցիոնալիզացիա յե մացրել
ցեխում: «Գիշեր ու ցերեկ մտածելուց հետո», ինչպես
ինքն ե ասում՝ գտավ են՝ ինչ անհանդատացնում եր ի-
րեն, ինչ խլել եր իրեն քունն ու հանդիսուը: Մեծացրեց
շկիֆը, վորի հետեւանքով 7 ժամում 7000 տուփ ե պատ-
րաստվում, առաջվա 5.500-ի փոխարեն:

Տարբերությունը կազմող 15.000 թիվը Մամիկոնին
բարձրացրեց ամբողջ ցեխի առաջ: Ցեխում ավելի բարձ-
րացավ շարվող տուփերի շնչիկոցը, վորոնք արկղներով
դուրս են գալու բակ, այնտեղից ել հաղարներով գլորվե-
լու դեպի հեռու ու մոտ քաղաքները, գյուղերը, խճիթ-
ներն ու խանութները:

ԴՐԱՅԱՐ

ԲՈՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՏՊԱԳԻՐ ԽՈՍՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՎԱՄԱՐ

Բուրժուական հասարակակարգում գիրն ու գրականությունը տիրող դասակարգերի սեփականությունն է:

Չնայած բուրժուազիան ականջ և խլացնում, վորիքը թե ինքը սրբազն և համարում մամուլի ազատությունը, սակայն այդ սրբազն բարիքից աշխատավոր ժողովուրդն ոգտվել չի կարող, քանի վոր նա չունի ամենահիմնականը գիր ու գրականությունը մասսայականացնելու բազան՝ տպագրական արդյունաբերությունը:


Ցարական ժամանակաշրջանի ու դաշնակցական Հայաստանյան Հանրապետության մայրաքաղաք Յերևանում յեղած-չեղածը մի քանի մասնավոր տպարաններ եյին, վորոնք վոչ մի համեմատության չի կարելի դնել այն հսկայական տպագրական արդյունաբերության հետ, վորն ստեղծել է Խորհրդային իշխանությունը Յերևանում:

Պետհրատի տպարանն այժմ թե իր տեխնիկայով, և թե իր արտադրանքով հանդիսանում է Խորհրդության մեջ մեկը:

Տպարանը լավ գիտակցելով թե ինչ նշանակություն ունի բայլչեիկյան գրականության տարածումը մասսա-

ների մեջ վճռական պայքար և մղել պլանների կատարման համար և առաջին հնգամյակը կատարել և 3 տարի 2 ամսում. նախատեսնված 2,411,700 ո. արտադրանքի գիմաց տալով 4,158,400 ո. արտադրանք պլանը կատարելով 172,4 0/0-ով:

Տպարանն այժմ որական արտադրում է 6—7 որաթերթ 100,000 տիրաժով. այստեղ և տպագրվում աշխարհի միակ քրութեան թերթը «Միա-Թագան»։ տարեկան տպագրում է 100 անուն դասագիրք և 400 անուն ուրիշ գրքեր, վորոնց մեջ այնպիսի նշանակալից ու փառահեղ հրատարակություններ, ինչպիսիք են Լենինի




Ընկ. Սուրեն Հովսեփյան Ընկ. Հայկ Մինասյան Հատորները, Ստալինի «Լենինիզմի հարցերը» Մարքսի ու Ենգելսի աշխատությունները, «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգիրքը և այլն:

Տպարանում այժմ աշխատում են մոտ 400 բանվորներ, վորոնց 83 տոկոսը ունեն սոցմեջման պայմանագրեր և հարվածային աշխատանքով բարձր են պահում բայլչեիկյան տեմպերը:

Այս տարվա մայիս ամսում մի շարք ցեխեր կատարել ու գերակատարել են իրենց պլանները։ Յեզ այդ բոլորը չնորհիվ այն բանի, վոր տպարանում կան կուսակցությանն ու Խորհ. իշխանությանը նվիրված հարվածային բանվորներ։ Ահա նրանցից մի քանիսը։

Սիմոն Գրիգորյան, բարձրահասակ խրոխտ, կանգնած է հսկայական տպագրական մեքենայի պատվանդանին ու աշխատում, սարքի ե գցում այն, հետն ել ցուցմունքներ ե տալիս ընկերներին։ Նա 26 տարեկան է, բայց



Ընկ. Սիմոն Գրիգորյան



Ընկ. Զայկազ Ավետիսյան

արդեն 16 տարի ե ինչ աշխատում ե տպարանում։ Լկթել անդամ ե տպարանի լկթել բիջի կազմակերպման որից։ 1927 թ. կուսանդամ է։

Նա հարվածային է, նրա մասին շատ ե գրվել ու խոսվել, մենք այդ մանրամասնությունների մեջ չենք մտնի։ Ամենայականն այն է, վոր նա տեխնիկայի տիրապետման ենտուզիաստ է։ 1930 թվին Յերևանում

Գերմանիայից ստացվեց առաջին ռատացիոն մեքենան, այդ մեքենան չափազանց բարդ է, նրա հետ պիտի վարվել զգուշ և ահա գերմանացի մասնագետը հազիվ յերեք ամսում կարողացավ հավաքել, սարքի գցել մեքենան։

* Սիմոնն ուշի-ուշով հետևում եր գերմանացի վարպետին և ահա այս տարի ինքը Սիմոնը ռատացիոնի 2-րդ մասը հավաքեց, սարքի գցեց ավելի կարճ ժամանակամիջոցում։

Նա կատարելապես տիրապետել ե ռատացիոնի բարդ տեխնիկան և հսկայական մեքենան վոչ մի գաղտնիք չի կարող թագցնել իր բազմապիսի պտուտակներում յերիտասարդ վարպետ Սիմոնից։

Ռատացիոնի վրա ե աշխատում նաև ընկ. Սուրեն Հովսեփյանը. նա սկզբում տպարանում յեղել է սեագործ բանվոր, ապա առաջ ե քաշվել վորպես մեքենայի վրա թուղթ դարսող (նակլատչիկ), իսկ այժմ աշխատում ե ռատացիոն մեքենայի վրա։ Ռատացիոնն հանձինս ընկ. Սուրեն Հովսեփյանի ունի մի հոգատար բարեկամի, վոր վոչ մի ջանք չի խնայում, վոր ռատացիոնը լինի, մաքուր, որինակելի և գրանով իսկ յերկարի իր կյանքը։

Կարմիր բանակի շարքերում մարզվելուց հետո նորից 1932 թ. սկզբին տպարան ե վերադարձել լինութիպի գրաշար ընկ. Հայկազ Ավետիսյանը. նա տպարան ե բերել բանակային դիսցիպլինան նա լինութիպի ցեխի կուսակազմակերպիչն ե և իբրև այդպիսին ձգուում ե որինակինեւ ոոլորի համար և նա որինակելի յե։ Այսպես որինակ՝ նա 7 ժամում պետք ե շարի 52,000 տառ, բայց շարել ե 70,000 տառ. 18,000-ով ավելի։

Հայկ Մինասյանն ել աշխատում ե ցինկոդրաֆիայում իբրև ցեխի վարիչ, մայիսին ցինկոդրաֆիան իր պլանը կատարել ե 125,8 0/0-ով։ ցեխի լավագույն հարավային իւղանությունը պարզաբանված է։ Յեկան վածայինն ե և դեռ 1931 թվին պարզաբանված է։ Յեկան ամբողջովին անցել ե գործարքային սիստեմին, շուտով կեկրառվի անհատական գործարքը։ Ընկ. Հայկ Մինասյանի առաջատական գործարքը։

յանը, ինչպես նաև տպարտանի մի շաբք այլ ընկերներ
միաժամանակ սովորում են կոմհամալսարանի յերեկո-
յան կուրսերում՝ Մարքսի, Լենինի Ստալինի ուսմունքին
տիրապետելու ձգտումով։

Տպարանի դիրեկցիան ու հարվածայինները հարվա-
ծային կոլտնտեսականների համագումարի կապակցու-
թյամբ խոսք տվին ել ավելի ուժեղացնել տեմպերը
բայց և կան ճշմարիտ տպագիր խոսքը մեր յերկրի աշ-
խատավորական մասսաներին հասցնելու համար։



1P.

